ԲԿԳ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Պատասխանատու գործուղում. Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. հոկտեմբեր - 2017թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ արդարադատության նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Դիանա Ղազարյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալ
էլ. հասցեն		diana_ghazaryan@yahoo.com
Հեռախոսահամարը		(+37410)594157
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն
	Քաղ հասարակություն, մասնավոր հատված	«Հելիքս» ՍՊԸ (համաձայնությամբ), «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ (համաձայնությամբ)

Կարգավորման ենթակա խնդիրը	«Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին» ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշմամբ սահմանվում են հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց՝ արտասահման գործուղման մեկնելու համար ՀՀ վարչապետի թույլտվությունն ստանալու և գործուղումից վերադառնալուց հետո ՀՀ կառավարության աշխատակազմ գործուղման արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու ընթացակարգերը: Հաշվետվություններում ներկայացվում է տեղեկատվություն գործուղման նպատակի, հրավիրողի, քննարկված թեմաների, ելույթների, հանդիպումների, ընդունված որոշումների, ստորագրված փաստաթղթերի, ակնկալվող արդյունքների և այլնի վերաբերյալ: Վերոնշյալ անձանց գործուղելու մասին ՀՀ վարչապետի անհատական որոշումները հրապարակվում են ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում: Սակայն արտասահման գործուղման արդյունքների մասին հաշվետվությունները չեն հրապարակվում:
Հիմնական նպատակը	Հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց գործուղելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացում, ՀՀ կառավարության գործունեության թափանցիկության բարելավում:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Կստեղծվի «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա՝ պաշտոնատար անձանց օտարերկրյա պետություն գործուղումների որոշումների և դրանց հաշվետվությունների հրապարակման միասնական հարթակ՝ որոնման հնարավորությամբ:

ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Գործուղումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների հանրայինացումը կհանգեցնի նախկինում քաղաքացիների համար չհրապարակվող տեղեկատվության հասանելիությանը և հանրային հաշվետվողականության բարձրացմանը
Հավակնություն	Գործուղումների հաշվետվությունների հասանելիությունը կապահովի պետական միջոցների առավել նպատակային օգտագործմանը, հաշվետվողականության և վստահության բարձրացմանը:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թույլտվությունների կարգը սահմանող իրավական ակտեում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: :	2016թ. սեպտեմբեր	2017թ. հունվար
2. Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում	2017թ. հունվար	2017թ. ապրիլ
3. Հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց արտասահման գործուղումների որոշումների և հաշվետվությունների հրապարակման՝ օգտագործողի համար մատչելի միասնական տեղեկատվական հարթակի ստեղծում:	2017թ. մայիս	2017թ. հոկտեմբեր

2. Կառավարության դրամաշնորհների հաշվետվողականություն. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. սեպտեմբեր - 2017թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ արդարադատության նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Դիանա Ղազարյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալ
էլ. հասցեն		diana_ghazaryan@yahoo.com
Հեռախոսահամարը		(+37410)594157
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման գործընթացները կանոնակարգվում են «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24 N 1937-Ն որոշմամբ և «ՀՀ պետական բյուջեից ՀՀ Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցները

	հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2008թ. մայիսի 19-ի ՆՀ-118–Ն հրամանագրով: Սահմանված չեն լիազոր մարմնի կողմից դրամաշնորհի տրամադրման համար կազամակերպված մրցույթների մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման, դրամաշնորհային ծրագրերը իրականացնող կազմակերպությունների կողմից հաշվետվությունների ներկայացման և լիազոր մարմնի կողմից այդ հաշվետվությունների հրապարակման ընթացակարգերը:
Հիմնական նպատակը	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների օգտագործման արդյունավետության բարձրացում, դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի և դրամաշնորհներով իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, դրամաշնորհների հասցեականության, ոլորտի հաշվետվողականության և թափանցիկության բարելավում:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու մրցույթին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի, ինչպես նաև դրամաշնորհներով իրականացված ծրագրերի հաշվետվությունների հրապարակում համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային վստահության բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհներով իրականացված ծրագրերի հաշվետվությունների հրապարակումը կխթանի հանրային հաշվետվողականութունը, ինչը կնպաստի պետական միջոցների ծախսման արդյունավետության բարձրացմանը և հասցեական օգտագործմանը:

	Պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու մրցույթին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի հրապարակումն հանգեցնելու է տեղեկատվության հասանելիության մակարդակի ընդլայնումը
Հավակնություն	Պետական բյուջեի միջոցների արդյունավետ կառավարում, իրականացվող դրամաշնորհային ծրագրերի որակական փոփոխություն, հաշվետվողականության , թափանցիկության և վստահության բարձրացում

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Դրամաշնորհների տրամադրման կարգերը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:	2016թ. սեպտեմբեր	2016թ. դեկտեմբեր
2. Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում	2017թ. հունվար	2017թ. մայիս
3. Դրամաշնորհ ստացած կազմակերպությունների հաշվետությունների հրապարակում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում:	2017թ. հունիս	Շարունակական
4. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մրցույթներին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի տեղադրում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում:	2017թ. հունիս	Շարունակական

3. «Ավելի ինտերակտիվ բյուջե». Պետական բյուջեի թափանցիկության ապահովում՝ «բաց տվյալների» սկզբունքի կիրառմամբ		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. դեկտեմբեր - 2018թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ ֆինանսների նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Ժիրայր Տիտիզյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության պետ
էլ. հասցեն		zhirayr.titizyan@minfin.am
Հեռախոսահամարը		(+37411)910406
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ կառավարության աշխատակազմ
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Հելիքս» ՍՊԸ (համաձայնությամբ), ««Կոմպասս» կրթական, հետազոտական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		Ներկայումս ՀՀ քաղաքացիները հնարավորություն ունեն ՀՀ կառավարության և ՀՀ ֆինանսների նախարարության վեբ-կայքերում տեղադրված առցանց էլեկտրոնային ինտերակտիվ բյուջեի միջոցով տեղեկանալ ՀՀ պետական բյուջեի կառուցվածքին, ըստ գործառական դասակարգման՝ ծախսերի պլանավորված և փաստացի մեծություններին: Համակարգի թերությունը կայանում է նրանում, որ չնայած այն օգտագործողին տրամադրում է վերոնշյալ տեղեկատվությանը ՀՀ պետական բյուջեի

	վերաբերյալ, այն չի կառուցված «բաց տվյալների» սկզբունքերի հիման վրա: Համակարգը օգտագործողին չի ընձեռում տեղեկատվությունը ներբեռնելու և այն՝ իր նպատակների համար մշակելու հնարավորություն:
Հիմնական նպատակը	Էլեկտրոնային «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործումը հնարավորություն կտա բացի ծախսային մասից ինտերակտիվ եղանակով ցույց տալ բյուջեի ոչ միայն պլանավորված, այլ նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտները, համապատասխան կատարելագործված գործիքների կիրառմամբ հնարավոր դարձնել կոնկրետ տվյալների որոնումը (օրինակ բյուջեի ծախսերի բաշխումը ՀՀ պետական մարմինների ներսում և այլն), ինչպես նաև տեղեկատվությունը դարձնել մատչելի այն օգտագործողի կողմից հետագա մշակման համար (Machine readable): Այն կապահովի ՀՀ պետական բյուջեի մասին տեղեկատվության օգտագործման մատչելիությունը, կբարելավի ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի և հավաքագրված եկամուտների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Պետական բյուջեի թափանցիկության մակարդակի բարելավում՝ «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	«Բաց տվյալների» սկզբունքի կիրառմամբ՝ ինտերակտիվ ձևաչափով պետական բյուջեի ծախսային և եկամտային հոդվածների առցանց ներկայացումը նպաստում է նորարարության և տեխնոլոգիաների գործածմամբ հասանելիության և հաշվետվողականության բարձրացմանը

Հավակնություն	«Բաց տվյալների» սկզբունքի կիրառումը թույլ կտա Հայաստանի պետական բյուջեն առավել հասանելի ու ընկալելի դարձնել վերլուծաբանների, լրագրողների ու քաղաքացիների համար: Համակարգը թույլ կտա իրականացնել բյուջեի ծախսերի համեմատական վերլուծություն, գտնել օրինաչափություններ և բացահայտել խնդիրները: Երկարաժամկետ կտրվածքում գործիքը թույլ կտա ավելի արդյունավետ պլանավորում իրականացնել՝ հիմնված փաստահեն վերլուծությունների վրա:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Մասնավոր ընկերությունների և քաղաքացիական հասակարության հետ քննարկումներ՝ աշխատանքների շրջանակը հստակեցնելու նպատակով:	2016թ. հոկտեմբեր	2017թ. հունվար
2. Տեխնիկական առաջադրանքի մշակում և գնումների գործընթացի անցկացում	2017թ. փետրվար	2017թ. հունիս
3. «Բաց տվյալների» սկզբունքի վրա հիմնված «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործում՝ նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտների ներկայացման հնարավորությամբ:	2017թ. հուլիս	2018թ. հունիս

4. «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. սեպտեմբեր - 2018թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Արմեն Խուդավերդյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալ
էլ. հասցեն		armen.khudaverdyan@ethics.am
Հեռախոսահամարը		(+37410)5880795
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ կառավարության աշխատակազմ
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Հետք» (համաձայնությամբ), «Թրանսպարենսի ինթերնեշնլ» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		2012թ-ից բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ PDF ձևաչափով: 2015թ. Հանձնաժողովը հայտարարարագրերի էլեկտրոնային համակարգում ստեղծել է հաշվետվությունների համակարգ, որը հնարավորություն է տալիս ստանալու ինչպես հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացրած, այնպես էլ

	ժամկետից ուշ ներկայացրած անձանց մասին տեղեկատվությունը: Այն դեռևս կապակցած չէ Հանձնաժողովի www.ethics.am կայքէջի հետ և օգտվողի համար անհասանելի է: Արդյունքում գործող համակարգը օգտվողներին հնարավորություն է տալիս դուրս բերել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետից ուշ ներկայացրած հայտարարատուների մասին տվյալներ, սակայն ոչ ամփոփ տեսքով (ցուցակների դուրսբերման հնարավորություն գործող համակարգը չի ընձեռում): Դրա հետ մեկտեղ, Հանձնաժողովի www.ethics.am կայքէջի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում հայտարարագրերի որոնումն իրականացվում է պաշտոնատար անձի «Անուն, Ազգանուն», «Պաշտոն» և «Տարի» հայտանիշներով: Առկա են խնդիրներ՝ կապված ոչ միայն հայտարարագրերի տվյալներին հասանելիության մատչելիության ապահովման, այլև այդ տվյալների հետագա վերամշակման հետ: «Հայտարարագրերի ռեեստր» բաժինն օգտվողների, մասնավորապես՝ հետաքննող լրագրողների, հայտարարարագրերի տվյալների ուսումնասիրություններ իրականացնողների համար դեռևս մատչելի չէ հետևյալ տեսանկյունից. հայտարարագրերից պահանջվելիք տվյալների ընտրության՝ ըստ կոնկրետ հայտանիշի, առանձին տարիների տվյալների շարքերի (դինամիկայի) ստացման ու վերլուծությունների:
Հիմնական նպատակը	Քաղաքացիական հասարակության համար մատչելի ու հասանելի դարձնել օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացրած հայտարարատուների տվյալները, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ինտերակտիվ եղանակով համակարգից ստանալու հրապարակման ենթակա տվյալները էլեկտրոնային բաց ձևաչափով:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ֆորմատի համապատասխանեցում «բաց տվյալների» սկզբունքին, դրանց վերամշակման,

	վերլուծության, որոնման համակարգի կատարելագործում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակումը «բաց տվյալների» սկզբունքով կխթանի տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը, ինչպես նաևկապահովի առավել բարձր հանրային հաշվետվողականություն
Հավակնություն	Ակնկալվում է ՔՀ օժանդակությամբ ազդեցություն ունենալ հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման պարտականության կատարման գործընթացի վրա՝ բարելավելով ինչպես օրենքով սահմանված ժամկետում չներկայացված, այնպես էլ ուշ ներկայացված հայտարարագրերի վիճակագրությունը: Դրա հետ մեկտեղ, հայտարարագրերի ռեեստրի ինտերակտիվ գործիքի ներդրման արդյունքում Հանձնաժողովն ակնկալում է ՔՀ շահագրգիռ միավորումների կողմից ստանալու առավել փաստարկված առաջարկություններ ու դիմումներ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահանված գործունեության սահմանափակումների կամ շահերի բախման իրավիճակների, կամ էլ էթիկայի կանոնների առերևույթ խախտումների կամ այդ կապակցությամբ արձանագրված ռիսկերի վերաբերյալ:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Շահագրգիռ քաղաքացիական միավորումներին հանձնառության առաջարկության ներկայացում, նրանց կարծիքների ստացում, քննարկումների կազմակերպում, արդյունքների ամփոփում՝ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացրած անձանց ցուցակների հրապարակման, Հանձնաժողովի կայքէջի «Հայտարարագրերի ռեեստր» բաժինը օգտվողների համար ինտերակտիվ դարձնելու	2016թ. սեպտեմբեր	2016թ. դեկտեմբեր

ճանապարհով ծրագրային ապահովման մշակման վերաբերյալ:		
2. 2016թ. հայտարարագիր չներկայացրած և սահմանված ժամկետից ուշ ներկայացրած անձանց ցուցակների հրապարակում Հանձնաժողովի կայքում:	2016թ. դեկտեմբեր	2017թ. մարտ
3. Հանձնաժողովի www.ethics.am կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնողական համակարգի զարգացում, դրա՝ օգտվողի համար ինտերակտիվ հասանելիության ապահովում, ծրագրային ապահովման մշակում և ներդնում:	2017թ. մարտ	2018թ. հունիս

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

5. Համայնքային որոշումների պորտալ. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. սեպտեմբեր - շարունակական**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Աշոտ Գիլոյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ
էլ. հասցեն		agiloyan@gmail.com
Հեռախոսահամարը		(+37410)511342
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ մարզպետարաններ
	Քաղաքացիական	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման

	հասարակություն, մասնավոր հատված	կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ), «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		Ներկայումս Հայաստանի Հանրապետության համայնքի ավագանու և ղեկավարի որոշումները էլետրոնային կերպով հրապարակվում են տարբեր պաշտոնական վեբ-կայքերում, մասնավորապես՝ ՀՀ համապատասխան մարզպետարանների վեբ-կայքերում՝ PDF ֆորմատով: Իրավական ակտին հղման անվանման մեջ հիմնականում նշվում են իրավական ակտի համարը և ընդունման ամսաթիվը, որը անհար է դարձնում այլ պարամետրերով օգտագործել «որոնել» գործիքը: Գոյություն չունի Հայաստանի Հանրապետության համայնքի ավագանու և ղեկավարի որոշումները էլետրոնային եղանակով հրապարակման մեկ միասնական հարթակ, ինչպես այլ իրավական ակտերի դեպքում է (www.arlis.am վեբ-կայքը): Սա օգտագործողի համար ստեղծում է դժվարություններ իրեն անհրաժեշտ իրավական ակտը գտնելու գործում:
Հիմնական նպատակը		Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, փնտրելու հնարավորության ստեղծում (պարզ և ընդլայնված որոնում), օգտագործման մատչելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը		«Բաց տվյալների» սկզբունքի հիման վրա համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին		Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների՝ «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա հրապարակումը տեղեկատվության հասանելիության առումով նոր որակ է հաղորդում հանրային հաշվետվողականության արժեքի ներդրման և

	հետևողական զարգացման հարցում	
Հավակնություն	Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում, հաշվետվողականության և վստահության բարձրացում:	
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում վերաբերյալ հնարավոր տեխնիկական լուծումների քննարկում քաղհասարակության և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:	2016թ. սեպտեմբեր	2016թ. նոյեմբեր
2. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում՝ որոնման հնարավորությամբ:	2016թ. դեկտեմբեր	2018թ. հունիս
3. Համայնքային ծառայողների ուսուցման կազմակերպում և անցկացում	2017թ. հուլիս	2017թ. դեկտեմբեր
4. Նախկինում ընդունված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների արխիվային բազայի ստեղծում:	2018թ. հունվար	Շարունակական

6. Հաշվետու լիցենզավորում. Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. օգոստոս – 2017թ. ապրիլ**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ արդարադատության նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Դիանա Ղազարյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալ
էլ. հասցեն		diana_ghazaryan@yahoo.com
Հեռախոսահամարը		(+37410)594157
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Ներդաշնակ զարգացում» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների կողմից տրամադրված լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ միասնական գրանցամատյան առկա չէ և լիցենզիայի առկայության, բացակայության կամ բնօրինակի հետ իսկության վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է ստուգել միայն թղթային եղանակով: Լիցենզիաները հրապարակվում են ընտրանքային սկզբունքով՝ դրանք տրամադրող լիազոր մարմինների համապատասխան պաշտոնական

	կայքերում: Միաժամանակ, պետական մարմինների կողմից անցկացվող մրցույթների կամ այլ միջոցառումների ժամանակ լիցենզիայի պարտադիր առկայության կամ դրա վավերականության ստուգման գործընթացը առավել դյուրին և արդյունավետ կերպով հնարավոր կլինի իրականացնել միասնական էլեկտրոնային համակարգի առկայության պարագայում, քանզի ստուգող կողմը, օգտվելով լիցենզիաների պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանից, կարող է միայն լիցենզիայի համարը և ամսաթիվը մուտքագրելով, ստուգել լիցենզիայի առկայության և դրա վավերականության մասին տեղեկատվությունը:
Հիմնական նպատակը	Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծումը կնպաստի լիցենզիաների տրամադրման գործընթացի, ծանուցման ենթակա գործունեության տեսակների վարչարարության առավել պարզեցմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը	Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում և տրամադրված լիցենզիաների թվայնացում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյանի առկայությունը տեղեկատվության հասանելիության տեսանկյունից կարևոր խթան կհանդիսանա ոլորտի թափանցիկության, հանրային հաշվետվողականության և հանրային ծառայությունների մատուցման բարելավման տեսանկյունից

Հավակնություն	Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյան առկայություն, որը կնպաստի հանրությանը՝ լիցենզավորվող գործունեությամբ զբաղվողների, լիցենզիաներում առկա տեղեկատվության հասանելիությանը և լիցենզիաների կեղծման ռիսկերի բացառմանը:		
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ		Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն:		2016թ. օգոստոս	2016թ. հոկտեմբեր
2. Իրականացնել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների մշակում:		2016թ. սեպտեմբեր	2016թ. նոյեմբեր
3. Մշակել պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյան, համակարգչային ծրագիր (software) և ստեղծել էլեկտրոնային կայք:		2016թ. սեպտեմբեր	2017թ. մարտ
4. Թվայնացնել նախկինում պետական մարմինների կողմից տրամադրված բոլոր լիցենզիաները և դրանք ներառել միասնական էլեկտրոնային գրանցամատյանում:		2016թ. դեկտեմբեր	2017թ. մարտ
5. Համակցել էլեկտրոնային գրանցամատյանը այլ պետական էլեկտրոնային գրանցամատյաններին, օրինակ՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բազայի հետ (e-register):		2017թ. մարտ	2017թ. ապրիլ
6. Կազմակերպել լիցենզիա տրամադրող պետական մարմինների ներկայացուցիչների համար էլեկտրոնային միասնական գրանցամատյանի վարման առանձնահատկությունների վերաբերյալ համապատասխան դասընթացներ:		2016թ. դեկտեմբեր	2017թ. մարտ

7. Open &Social. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. նոյեմբեր – 2018թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Արման Սարգսյան
Պաշտոնը, վարչությունը		Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն
էլ. հասցեն		ceo.arman.sargsyan@nilsr.am
Հեռախոսահամարը		(+374 10)208344
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	«Վորլդ Վիժն Հայաստան» ՀԿ (համաձայնությամբ), «Ներդաշնակ հասարակություն» **սոցիալական աշխատողների** հայկական ասոցիացիա (համաձայնությամբ), «Ապավեն» ՀԿ (համաձայնությամբ), «Առաքելություն Հայաստան» ՀԿ (համաձայնությամբ), «Լիարժեք կյանք» ՀԿ (համաձայնությամբ), «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ (համաձայնությամբ), «Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ (համաձայնությամբ), «Հույսի Կամուրջ» ՀԿ (համաձայնությամբ), «Փյունիկ» ՀԿ (համաձայնությամբ), «Հայկական կարիտաս» ՀԿ (համաձայնությամբ), «Հաշմանդամների հայկական ասոցեացիա» ՀԿ

		(համաձայնությամբ), ««ՍՕՍ» մանկական գյուղեր» ՀԲՀ (համաձայնությամբ), «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ), «ՀՕՖ» (համաձայնությամբ), «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ)
Կարգավորման ենթակա խնդիրը		ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում են ավելի քան 80 պետական ծրագրեր, որոնց ապահովման ընթացակարգերը բազմազան են: Այս առումով կա սոցիալական ծառայությունների բիզնես գործընթացներն առավել մատչելի ձևով ու գործիքներով հանրությանն իրազեկելու և սոցիալական ծառայություններն առավել հասանելի դարձնելու անհրաժեշտություն, ինչը կապահովվի նաև պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության և վստահելիության բարձրացման միջոցով:
Հիմնական նպատակը		Open&Social» հանձնառության շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների ՝ միջոցով կապահովվի հանրության առցանց մասնակցությամբ սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ ապահովելով սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացումը հանրության համար:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը		«Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման, վերլուծության և հասանելիության ապահովման վրա հիմնված գործիքի ներդրում , ինչպես նաև «114 թեժ գիծ» ծառայության «զանգի կենտրոն» ծառայության վերափոխում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին		Սույն հանձնառությամբ հանրային մասնակցությունն ապահովող

	գործընթացների շնորհիվ կբարձրանա պետության կողմից տրամադրվող ծառայությունների որակը, ինչպես նաև կմեծանա տեղեկատվության հասանելիությունը և կբարելավվի հանրային հաշվետվողականության մակարդակը
Հավակնություն	Սոցիալական ծառայությունների որակի վերաբերյալ հետադարձ կապի շնորհիվ դրանց արդյունավետության բարձրացում, տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության ապահովում:

Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. Շահառուին՝ սոցիալական ծառայությունների վերաբերյալ թիրախավորված տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով http://www.esocial.am ինտեգրված սոցիալական ծառայությունների առգիծ տեղեկատվական համակարգում «Open&Social» գործիքի ներդրում՝ ապահովելով շահառուի կողմից իրեն վերաբերող գործոնների ընտրությամբ՝ սոցիալական ծառայությունների տեղեկատվության ինքնաշխատ տրամադրում:	2016թ. նոյեմբեր	2018թ. հունիս
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պարբերաբար իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի և գնահատման հրապարակման ենթակա արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում սոցիալական պաշտպանության ոլորտի «Գիտելիքների կառավարման համակարգ»՝ www.elibsocial.am ռեսուրսում:	2017թ. հունվար	2018թ. հունիս
3. Հարթակի ստեղծում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշտանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային գործընթացների պարզեցում,	2017թ. դեկտեմբեր	2018թ. հունիս

ժամանակի կրճատում:		
4. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում՝ թեժ գծի ծառայությունը զանգի կենտրոն դարձնելու միջոցով, քաղաքացիներից ստացվող բողոքների և ահազանգերի գծով ներքին ուսումնասիրությունների իրականացում	2017թ. հուլիս	2018թ. հունիս

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

8. Մեկ պատուհան բանակում. ՀՀ զինկոմիսարիատներում «Մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի ներդրում		
Պարտավորության մեկնարկի և ավարտի օրերը **2016թ. սեպտեմբեր – 2018թ. հունիս**		Նոր հանձնառություն
Լիազոր մարմինը		ՀՀ պաշտպանության նախարարություն
Լիազոր մարմնի պատասխանատու անձը		Ալիկ Ավետիսյան
Պաշտոնը, վարչությունը		ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական- ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության աջակցման կենտրոնի պետ
էլ. հասցեն		alik.avetisyan@pims.org
Հեռախոսահամարը		(+37410)294519
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ պետական մարմիններ	
	Քաղաքացիական հասարակություն,	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, «Օգնություն և իրավունք» ՀԿ

	մասնավոր հատված	
Կարգավորման ենթակա խնդիրը		Զինկոմիսարիատների գործունեության շրջանակը բավականին բազմաբնույթ է, և որոշ հարցերում կա օրենսդրության կարգավորման հստակեցման անհրաժեշտության: Այս փաստն անդրադառնում զինկոմիսարիատների գործառույթների հստակության, մատուցվող հանրային ծառայությունների որակի, դրանց ժամկետների վրա՝ ազդելով հասարակության վստահության մակարդակի վրա: Դրա հետևանքն է ավելորդ վարչարարությունը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: «Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի ներդրումը 2-3 զինկոմիսարիատներում հնարավորություն կտա փորձարկել դրա արդյունավետությունը վերոնշյալ խնդիրների և արհեստական խոչընդոտների վերացման տեսանկյունից:
Հիմնական նպատակը		«Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի փորձարկման և հետագա ներդրման միջոցով՝ զինկոմիսարիատների աշխատանքում վարչարարության բարելավում և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, զինկոմիսարիատի անձնակազմի հետ քաղաքացիների շփումների շրջանակի սահմանափակում, հայցվող տեղեկատվության/փաստաթղթերի տրամադրման ժամկետների կրճատում:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը		«Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի իրականացում 2-3 զինկոմիսարիատներում:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը		Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին		Զինկոմիսարիատներում «մեկ պատուհանի» ներդրմամբ՝ կբարձրանա տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը, կնվազի ծառայությունների տրամադրման հետ կապված ծախսերը և միաժամանակ կբարելավվի հանրային ծառայությունների որակը

Հավակնություն	Վարչարարության և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, գործընթացների պարզեցում և հստակեցում, հանրային վստահության բարձրացում:	
Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ	Մեկնարկի օր	Ավարտի օր
1. «Մեկ պատուհանին» վերաբերող գործառույթների շրջանակի հստակեցում:	2016թ. սեպտեմբեր	2017թ. նոյեմբեր
2. Զինկոմիսարիատների կարողությունների գնահատում և ընտրություն:	2016թ. դեկտեմբեր	2017թ. փետրվար
3. «Մեկ պատուհանի» ներդրում:	2017թ. մարտ	2018թ. հունիս
4. Հասարակական վստահության փոփոխության վերաբերյալ հետազոտություն (ըստ անհրաժեշտության):	2018թ. հունվար	2018թ. հունիս
5. ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններիվերաբերյալ առաջարկությունների ներկայացում (ըստ անհրաժեշտության):	2018թ. մարտ	2018թ. հունիս